ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 նոյեմբերի 2024թ. թիվ 942-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՎ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ԸՆԹԱՑԻԿ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆԸ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով 2024 թվականի մայիսի 25-26-ին ՀՀ Լոռու մարզում տեղացած հորդառատ անձրևների հետևանքով տեղի ունեցած հեղեղների պատճառով Ալավերդի համայնքի կրած վնասները, ինչպես նաև Լոռու մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների համար հատկացված գումարից մարզային (տեղական) նշանակության ճանապարհների երթևեկության կազմակերպման աշխատանքների նպատակով նախատեսված գումարի բաշխման անհնարինության հանգամանքով պայմանավորված առաջացած խնայողությունը, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով և 11-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2)-րդ կետով, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի 1)-ին ենթակետի «դ» պարբերությամբ և 71-րդ կետի 1)-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթներով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության 2024թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «04 բաժնի 05 խմբի 01 դասի 04 ծրագրի» «Լոռու մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների» համար հատկացված 294529600 (երկու հարյուր ինսունչորս միլիոն հինգ հարյուր քսանինը հազար վեց հարյուր) դրամ գումարից 76824800 (յոթանասունվեց միլիոն ութ հարյուր քսանչորս հազար ութ հարյուր) դրամ գումարը ուղղել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի մարզային (տեղական) նշանակության ճանապարհների վերականգնման աշխատանքներին:

2. Վերոնշյալ աշխատանքների գնման գործընթացն իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնման ձևով: Գնման ընթացակարգի հրավերը տրամադրել միայն գնման հայտում նշված անձանց (հնարավոր մասնակիցներին):

X

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. նոյեմբերի 14
ք.Վանաձոր